

# Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ33 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

/նիստը կայացել է 2020թ. հոկտեմբերի 17-ին առցանց/

Նիստին մասնակցում էին մանկխորհրդի բոլոր 36 անդամները, ծնողական խորհրդի և աշակերտական խորհրդի նախագահները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

#### Օրակարգում՝

1. Օրակարգի հարցերի հաստատում:

/հաղորդող՝ Ի.Վարդանյան/

2. Զեկուցել նախորդ մանկխորհի որոշումների կատարման մասին:

/հաղորդող՝ Ի.Վարդանյան/

3. Ծնողական խորհրդի նախագահի 2020-2021 ուստարում կատարվելիք աշխատանքների ծրագրի հաստատում:

/զեկ.՝ Վ.Մանջիկյան/

4. Աշակերտական խորհրդի նախագահի 2020-2021 ուստարում կատարվելիք աշխատանքների ծրագրի հաստատում:

/զեկ՝ Մ.Թամազյան/

5. ԱՌԻՊ-ի գործողությունների քննարկում:

/զեկ.՝ Ն.Մխիթարյան/

6. 2020 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկում:

/ հաղորդող Ի. Վարդանյան /

7. Բացառել դրամահավաքության ցանկացած փորձ:

/հաղորդող՝ Ի. Վարդանյան /

8. Դասալսումների ձևաթղթի լրամշակում:

/հաղորդող՝ Ի. Վարդանյան /

9. Դիմել SUԱԿ 2-րդ մակարդակի գնահատման համար:

/հաղորդող՝ Ն. Մխիթարյան /

10. Մանկավարժական գեկուցում:

/հաղորդող՝ Ա. Հարությունյան/

Ելնելով մանկխորհի մի խումբ անդամների կարծիքներից, մանկավարժական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել նախապես հայտարարված օրակարգը:

Հիմք ընդունելով ծնողական խորհրդի նախագայի հաշվետվությունը և պլանը՝ հաստատության մանկխորհը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել 2020-2021 ուստարվա աշխատանքային պլանը

Ելնելով աշակերտական խորհրդի նախագահի ներկայացրած հաշվետվությունից, մանկավարժական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել 2020-2021 ուստարում կատարվելիք աշխատանքների ծրագրը

Ելնելով մանկխորհի մի խումբ անդամների կարծիքներից, մանկավարժական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Մշտապես կապի մեջ լինել աջակցող թիմի հետ:

Հիմք ընդունելով տնօրենի հաղորդումը, մանկխորհը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Ի գիտություն ընդունել Ի. Վարդանյանի ելույթը դպրոցի 2021 թ –ի եկամուտների ու ծախսերի նախնական նախահաշվի վերաբերյալ:

Հիմք ընդունելով տնօրենի հաղորդումը, մանկխորհը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Կատարել տնօրենի հանձարարականը դպրոցում դրամահավաքության ցանկացած փորձ բացառելու վերաբերյալ:

Ելնելով մանկխորհի մի խումբ անդամների կարծիքներից, մանկավարժական խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Քննարկման արդյունքները ներկայացնել նոյեմբերին կայանալիք աշխատաժողովին:

Ելնելով մանկխորհի մի խումբ անդամների, աջակցող թիմի կարծիքներից, մանկավարժական խորհուրդը

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

5- րդ դասարանի թվով 3 աշակերտներին դպրոցական գնահատման արդյունքները ներկայացնել ՏՄԱԿ՝ 2-րդ մակարդակի գնահատման համար:

Ժողովի նախագահ՝

Ի.Վարդանյան

Քարտուղար՝

Ն.Մխիթարյան